ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/62

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Մի վնասիր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Մ. Սահակյանի (լիազորագիր, տրված՝ 03.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8834-2019 գրությամբ «Մի վնասիր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի 21.05.2019թ. թիվ 4/04-170 գրության հիման վրա, 29.05.2019թ. թիվ 26/26-1/8834-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մի

վնասիր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մի վնասիր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մի վնասիր» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հարկային պարտավորություն չի ունեցել, ճիշտ ժամանակին հաշվարկել և վճարել է իր հարկային պարտավորությունները: Սակայն 2019թ. մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկի մեջ թյուրիմացաբար հաշվարկվել է 4 220 000 ՀՀ դրամ շահաբաժնի գումար, որից առաջացել է 211 000 ՀՀ դրամ եկամտային հարկ: Ընկերությունը հայտնել է, որ շահաբաժինը չի վճարվել մարտ ամսին և հետևաբար չի կարող առաջանալ հարկային պարտավորություն (կից ներկայացվել է Ընկերության մարտ ամսվա բանկային քաղվածքը և դրամարկղային գրքի էջի պատճեն, որից երևում է, որ շահաբաժինը չի վճարվել և չպետք է ներառվեր մարտ ամսվա հաշվարկի մեջ):

25.04.2019թ. Ընկերությունը մասնակցել է պետական գնումների մրցույթին և այդ մեխանիկական սխալի պատճառով հարկայինի տեղեկատվական բազայում ծրագիրը պարտավորություն է ցույց տվել: Դրա մասին Ընկերությունը տեղեկացել է 15.05.2019թ. «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունից: 16.05.2019թ. Ընկերությունն ուղարկել է ճշգրտված հաշվարկ, սակայն տեղեկատվական բազայում ճշգրտումն երևում է տվյալ օրվա դրությամբ, այլ ոչ թե հետին ամսաթվով:

Քանի որ փաստացի 25.04.2019թ. դրությամբ Ընկերությունը չի ունեցել հարկային պարտավորություն, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տեղեկանքի մեջ առկա պարտքը մեխանիկական սխալի հետևանք է, որն արդեն իսկ ճշգրտման արդյունքում ուղղվել է, հետևաբար դա չի կարող համարվել ժամկետանց պարտավորություն:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/62 ընթացակարգի շրջանակներում 04.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել

է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.05.2019թ. թիվ 4/04-170 գրությամբ հայտնել է, որ 19.04.2019թ. Պատվիրատուի կողմից հայտարարվել է բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների գնման «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի մասնակից է հանդիսացել «Մի վնասիր» ՍՊԸ-ն, որը համապատասխան չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Այնուհետև սահմանված կարգով կատարվել է հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն և ստացվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունն ունի ժամկետանց հարկային պարտավորություններ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ: Համաձայն կարգի՝ հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, որը չի արվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/62 ընթացակարգի շրջանակներում 04.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 25.04.2019թ. հայտ է ներկայացրել «Մի վնասիր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մի վնասիր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 22-րդ և 23-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մի վնասիր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 180 151 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8834-2019 գրությունը, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի 21.05.2019թ. թիվ 4/04-170 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ

տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպված «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 25.04.2019թ. հայտ ներկայացրած մասնակից «Մի վնասիր» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած Ընթացակարգի 22-րդ և 23-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մի վնասիր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 180 151 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Մի վնասիր» ՍՊԸ-ն «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերությանն ուղղված 05.06.2019թ. թիվ 1439 գրությունը, որով ամրագրվել է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ Ընկերության կողմից 16.05.2019թ. ներկայացվել է 2019թ. մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ճշգրտված հաշվարկ, որով **զրոյացվել են նախորդ հաշվարկով հայտարարագրված 4 220 000 ՀՀ դրամ շահաբաժինների, ուստի նաև հաշվարկված 211 000 ՀՀ դրամ եկամտային հարկի գումարները (որը վերաբերում է նաև 25.04.2019թ. դրությամբ առկա 180 151 ՀՀ դրամ պարտավորությանը)**, ինչի արդյունքում ճշգրտված հաշվարկը ներկայացնելու օրվա դրությամբ մարվել են Ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունները:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 05.06.2019թ. թիվ 1439 գրությունը, համաձայն որի՝ Ընկերության կողմից

16.05.2019թ. ներկայացված 2019թ. մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ճշգրտված հաշվարկի արդյունքում զրոյացվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 25.04.2019թ. առկա 180 151 ՀՀ դրամի պարտավորությունը, գտնում եմ, որ Ընկերությունը «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8834-2019 գրությամբ «Մի վնասիր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**